



## **Յեղասպանութեան ճանաչման աշխատանքային խումբ**

Բեռլին: 19.07.2021

Շատ յարգելի Արտգործ Նախարար Պարոն Մասս,

Այս տարուայ յուլիսի 9 և 10-ին Ադրբեջանի միապետ Ալիևը Բաքուում հաւատարմագրուած դիւանագէտներին հրաւիրել էր քարոզչական շրջագայութեան: Անցեալ աշնանը Լեռնային Արցախի «ազատագրուած» պատմական մայրաքաղաք Շուշին, որպէսզի ցուցադրէր, թէ Շուշին ադրբեջանական (մշակութային) քաղաք է, և Արցախեան հակամարտութիւնը ընդմիջտ լուծուած է: Արժէ յիշատակել, թէ հայկական քաղաքներ Շուշին և Հադրութը գտնուում էին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (1923-1990): ՌԴ, Ֆրանսիան և ԱՄՆ չէին Հետևել Ալիևի հրաւերին, քանի որ նրանք են ԵԱՀԿ-ի Մինսկի Խմբի համանախագահներն և իրաւացիօրէն համոզուած են, որ ներկայիս Արցախեան հակամարտութիւնը լուծուած չէ:

Գերմանիայի դիւանագիտական և քաղաքական գործիչներն էլ չէին ընդառաջել այդ հրաւերին, Գերմանիան պատկանում է Մինսկի Խմբի 13 անդամ երկրների կազմին: Մեր, մարդու Իրաւանց կազմակերպութիւնը այժ ակնկալում է թէ Գերմանիան աւելի պարտականութիւն կստանձնի և նախաձեռնող կլինի Արցախեան հակամարտութեան հարցում: Մենք յիշեցնում ենք, թէ Գերմանիան առաջին համաշխարհային պատերազմում Օսմանեան Սուլթանութեան ամենակարևոր դաշնակիցն էր, և Գերմանիան լաւատեղեակ և մասամբ էլ մեղսակից էր հայ ժողովրդի բնաջնջման խնդրում: Հարիւր տարի տևեց մինչև Գերմանիայի խորհրդարանը (Բունդեսթագ) 2016 թ. այդ ոճրագործութիւնները համաձայն ՄԱԿ-ի ցեղասպանութեան քնննեցիայի ճանաչեց որպէս ցեղասպանութիւն: Ներկայիս էլ հայ ժողովուրդը դարձեալ կանգնած է գոյութեան վտանգի առջև, դեռ իրեն մնացած տարածքում, հարաւային Կովկասում, որտեղ ՆԱԹՕ-ի անդամ Թուրքիայի հետ միասին Ադրբեջանն էլ է սպառնում, ինչպէս դա եղաւ 1918-ին, զինուժի միջոցով, Փանթուրքական ձգտումներով:

Արցախի 150,000 հայ բնակչութեան դէմ պատերազմական գործողութեանը մասնակից եղան, 2020-ին Իսրայէլն ու Թուրքիան իրենց անօդաչու սարքերով, լրտեսութեամբ ու յարձակումներով: Թուրքիան Սուրիայի ԱՖրին շրջանից տեղափոխեց Ադրբեջան 4,000 իսլամ Զինադիւստներ, ինչպէս նաև Փաքիստանից և Աֆղանստանից կամաւորներ, հայերի դէմ: 44-օրեայ պատերազմում զոհուեցին շուրջ 5,000 հայ զինուորներ և քաղաքացիներ, ինչպէս նաև 10,000-ից աւելի դարձան հաշմանդամներ: Մեծ ջանքերով վերակառուցուած եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ և այլ աւերակների վերածուեցին, 80,000-ից աւելի մարդիկ դարձան փախստական: ՌԴ-եան միջամտութեան շնորհիւ պատերազմական գործողութիւնները թէպէտև դադարեցին, սակայն Արցախեան չկարգաւորուած ստատուսից սկիզբ առած հակամարտութիւնը բնաւ էլ լուծում չստացաւ: Թէպէտև ՌԴ խաղաղապահ զօրքը տեղակայուած է Արցախում, Ալիևեան ռեժիմը շարունակում է հայ ազգաբնակչութեանը ահաբեկել, որպէսզի նրանք թողնեն Արցախը և փախստականներն էլ չւերադառնան: ՀՀ սահմանային որոշ տարածքներ Ադրբեջանի բանակի կողմից օկուպացուած են: Ալիևը հռետորական եղանակով յաւակնում է ՀՀ-ի պետական տարածքներին, յատկապէս Սիւնիքի մարզին, որը գտնուում է նախկին հայկական Նախիջևան շրջանի հարևանութեամբ (1923-ից դարձել է Խորհրդային Ադրբեջանի անկալը), որպէսզի նախիջևանը կապի Ադրբեջանին, ինչպէս նաև Թուրքիայի երազը իրականանայ նախիջևանով և Սիւնիքով միանալ Ադրբեջանին: Դեռ աւելին, Ալիևը պահանջում է Հայաստանի միլիոնից աւելի հայ բնակչութիւն ունեցող մայրաքաղաք Երևանը և Սևանա լիճը, որոնք իբրթէ մտնում են Արևմտեան Ադրբեջանի կազմում: Հարևանների՝ Վրաստանի և ԻԻՀ նկատմամբ էլ ունի Ադրբեջանը հողային պահանջներ, Թէպէտև Ադրբեջանը, նոր միայն 1918-ին է անգլիացիների և բուլղիկների կնքահայրութեամբ մկրտուել, այն էլ Փանթուրքական ռազմական մեծ աջակցութեամբ:

Զինադադարի (10.11.2020) ակնյայտ խախտումներով է Ալիևը վերաբերում 200-ից աւելի ռազմագերիների և քաղաքացիների հետ, նրանց պահելով որպէս պատանդներ,

որպեսզի տարածքային պահանջներ կորզի: Եռակողմ զինադադարի համաձայն, նախատեսուած է ռազմագերիների անհապաղ ազատ արձակումը, “բոլորը, բոլորի դիմաց“: Մինչև այսօր պատանդ պահուած հայ գերիները համակարգուած եղանակով ստորացում, խոշտանգում և կամայականօրէն դատապարտում են երկարաժամկետ բանտարկութիւննրի:

Ուրախալի է, որ Բունդեսթագի և Եւրոխորհրդարանի CDU/CSU-ի խմբակցութեան անդամները, որոնք Ալեի ռեժիմի կողմից լրբիստական աշխատանք տանելու համար կաշառուած էին, ի վիճակի չեղան դերակատար լինել և Գերմանայի դեսպանտունը Բաքում, օկուպանտ Ալիևին չսատարեց, և 2021-ի յուլիսեան ուղևորութեանը դէպի Շուշի չմասնակցեց:

Ողջունելի է նաև Ձեր որոշումը՝ Մինսկի Խմբի աշխատանքների շարունակութեան նպաստումը:

Եւրոխորհրդի նախագահ, Շառլ Միշելն էլ, որը վերջերս այցելեց Երևան, կարևորեց Մինսկի Խմբի աշխատանքները:

Մենք լիովին համոզուած ենք, թէ որ միայն հակամարտութեան արդար լուծումը, ունենալու է խաղաղութեան հաւանականութիւն, համաձայն Հելսինգեան եզրափակիչ ակտին, երբ Արցախեան հակամարտութիւնը, ինչպէս նաև կարգավիճակը լուծւեն ազգերի ինքորոշման սկզբունքով:

Մենք լիայոյս ենք, որ Դուք ինչպէս նաև դաշնային կառավարութիւնը, ունենալու է այս առումով իր ներդրումը, և նախապէս շնորհակալութիւն ենք յայտնում նամակի պատասխանի համար:

Յարգալից բարևներով՝  
նախագահութեան յանձնարարութեամբ,  
Դոկտ. Ժիրայր Քոչարեան